

Վ. Դավթյանը մասնակցել է հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի նիստին

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը ապրիլի 10-ին մասնակցել է ՀՀ և ՌԴ միջև միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի հերթական երրորդ նիստին: Հանձնաժողովի հայկական կողմը ղեկավարում էր ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների փոխնախարար Վ. Տերտերյանը, ռուսական կողմը՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Ցիբուլսկին: Ներկա էին ՀՀ և ՌԴ գործադիր ինչպես նաև մարզային իշխանությունների ներկայացուցիչներ: Նիստի ընթացքում քննարկվել են երկու երկրների մարզային համագործակցության զարգացման հնարավորություններն առևտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և հումանիտար ոլորտներում, այդ համագործակցությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանագրային և իրավական բազայի ստեղծման, հաջորդ՝ չորրորդ նիստի նախապատրաստման և այլ հարցեր:

Խոսելով ՀՀ Սյունիքի մարզի և ՌԴ Վոլգոգրադի տարածաշրջանի միջմարզային համագործակցության մասին, Վ. Դավթյանը մասնավորապես նշել է.

-2013թ. դեկտեմբերի 1-ին հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում աշխատանքային այցով ՀՀ Սյունիքի մարզ էր ժամանել ՌԴ Վոլգոգրադի տարածաշրջանի նահանգապետ Ս. Բոժենովը, այդ ժամանակ կողմերը պայմանավորվածություն էին ձեռք բերել մի շարք հանաձայնագրերի շուրջ: Օբյեկտիվ պատճառներով 2014թ. այդ համաձայնագրերը չեն գործել: Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության չորրորդ ֆորումի շրջանակներում նախատեսվում է այդ համաձայնագրերի վերջնական քննարկումն ու վավերացումը: